

Պրոլետարներ ընդդ յերկրներ, միացե՛ք

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ
ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ՝ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿ Ժողկոմխորհի յեւ ՀԿ(բ)Կ Կենսկոմի
վորուումը

ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԿ(բ)Կ Կենսկոմի սեպտեմբերի 11-ի վորուումը

636
2-25

ԿՈՒՍՏԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Վ Ե Ա Ն. 1933

09 SEP 2013

09 SEP 2010

636 ⁴⁷
2-25

Պրոկուրորներ ընդ յերկրների, միացեր

ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ
ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ Ժողկոմիտեի յեվ ՀԿ(Բ)Կ Կենսկոմի
վորոշումը

1008
35173
3971

ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ

ՀԿ(Բ)Կ Կենսկոմի սեպտեմբերի 11-ի վորոշումը



ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Վ Ե Ա Ն. 1933

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԱՄԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՉԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿ Ժողովուրդին յեղ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի վարչությունը

ՀԱՅԿ Ժողովուրդին և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն նշում են, Վոր վերջին տարիների ընթացքում Հայաստանի անասնապահությունը միանգամայն անբավարար վիճակումն է գտնվում և կուսակցական կազմակերպությունների, նաև տեղական ու կենտրոնական խորհրդային մարմինների աշխատանքն անասնապահությունը բնագավառում՝ միանգամայն անբավարար է:

Խորհրդանախագիյն ու կուսակցական անասնապահության ասպարեզում կատարված վորոշ տեղաշարժերի հետ միասին (կազմակերպվել են 10 խոշոր անասնապահական խորհրդանախագիյններ՝ մոտ 10.000 գլուխ խոշոր յեղջուրավոր անասուններով ու 18.200 գլուխ վոչխարով և աղելի քան 480 անասնապահական ապրանքային ֆերմաներ՝ կուսակցական յեղջուրներին կից՝ 35.000 գլուխ խոշոր յեղջուրավոր անասուններով, 100.000 գլուխ վոչխարով և 11.000 գլուխ խոզով), անասնապահությունը բնագավառում շարունակում են գոյու-

Սրբազնի 1. Արդյուն

Հանձնված և արտադրված 22 հոկտեմբերի 1933 թ.

Արտադրված և ապագրելու 28 հոկտեմբերի 1933 թ.

Գլավկոմ № 7777 (Բ). Հրատ. № 140.

Պատվեր № 54. Տիրում 4.000

Կուսակցական արտադ. թերեվան. 48.000 ապ. 60.

թյուն ունենալ հետևյալ խոշորագույն թերությունները.

1. Միանգամայն անբավարար ե կազմակերպված անասունների խնամքը, չափազանց բարձր ե մատղաշ անասունների սատկելու տոկոսը (1933 թվականին խորհանտեսություններում սատկել ե հորթերի 25 տոկոսը, կոլտնտեսություններում՝ 15 տոկոսը), բեղմնավորման գործը վատ կազմակերպելու հետեանքով բարձր ե ստերջ կովերի տոկոսը (1933 թվականին հասել ե մինչև 30 տոկոսի), անասնապահական խորհանտեսություններում ե ապրանքային ֆերմաներում անտնտեսավարություն գոյություն ունի ե անթույլատրելիորեն վատ վիճակում ե գտնվում աշխատանքի կազմակերպումը:

2. Անբավարար վիճակում ե գտնվում կերի բազայի գործը ե միանգամայն անբավարար են կերի բազան ընդարձակելու ե կերի հաստատուն բազա ստեղծելու ուղղությամբ կիրառվող ձեռնարկումները: Անասնապահական շրջաններում չի կիրառվում ցանքաշրջանառություն, վորը կարող ե հացահատիկային արտադրանքն ավելացնելու հետ միաժամանակ նաև սպահովել կերի բազայի ընդարձակումը:

3. Անբավարար վիճակում ե գտնվում անասնապահության ասպարեզում կատարվող շինարարությունը, ինչպես ե անբավարար ե նրա վորակը (գոմեր՝ խորհանտեսություններում ու կոլտնտեսություններում ե անտեսական այլ շինարարություն):

4. Վերջին ժամանակներս շրջաններում վատացել ե անասնաբուժական սպասարկման գործը:

5. Անբավարար ե տեղական կազմակերպությունների դասակարգային զգաստությունը անասնապահության բնագավառում, անասնապահության ասպարեզում աշխատող կազերը խնդրված են դասակարգայնորեն խորթ ու թշնամի աթրերով, անբավարար ե անասնապահության ասպարեզում, մասնավորապես անհատական հատվածում, կուլակային-ֆլասարար գործողություններին ցույց տրվող գործնական դիմադրությունը:

Այս ամենի հետեանքով միանգամայն անբավարար են հոտի վիճակի քանակական ու վորակական հիմնական ցուցանիշները, անասունների թվի վորոշ կրճատում ե տեղի ունեցել նաև վերջին ձմեռվա ընթացքում՝ ինչպես առանձին կոլտնտեսություններում, այնպես ե հատկապես անհատական հատվածում:

ՀՍԽՀ Ժողկոմխորհն ու ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն հատկապես նշում են, վոր անասնապահության անբավարար վիճակում գտնվելը հետեանք ե նրա, վոր անասնապահության հարցերը դեռ չեն դարձել տեղական կուսակցական, խորհրդային ե կոլտնտեսական կազմակերպությունների ուղղորդության կենտրոնը ե վոր նույնիսկ հիմնական անասնապահական շրջաններում (Ստեփանավան, Աղբաբա, Ղարաքիլիսա, Ալլահվերդի, Մարտունի, Բասարգեհար, Սիսիան, Փաշայու ե այլն) կուսակցական ե խորհրդային կազմակերպու-

թյունները բավարար չափով չեն զբաղվում անասնապահության կոնկրետ, ուղեբառով ու գործնական խնդիրներով:

Նման դրությունը հետազոտում միանգամայն անհանդուրժելի և սոցիալիստական անասնապահության զարգացման խնդիրները Հայաստանի կուսակցական և խորհրդային կազմակերպությունների առաջիկա շրջանի նիւմնական ու կառավարագույն խնդիրները համարելով, ՀՍԽՀ Ժողկոմխորհն ու ՀԳ(Բ)Կ Կենտկոմը վերջում են:

ԽՈՐՀՐԴԱՆԻ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍԼԱՏՐԵՍԻ) ԳԺՈՎ

1. Նշելով Մասլոտրեստի անբավարար ղեկավարությունը խորհրդատեսությունների նկատմամբ, եռաշարիկ Մասլոտրեստի ղերեկաորը ընկ. Բ. Հաբուքյունյանին՝ մեկ ամսվա ընթացքում վերակառուցել տրեստի ղեկավարությունն այնպես, վոր մասնագետների (անասնաբույժներ, զոոտեխնիկներ, հաշվապահներ և այլն) լավագույն ուժերը մշտական աշխատանքի ուղարկվեն խորհրդատեսությունները, նաև ապահովվի խորհրդատեսություններին սխտեմատիկ արտադրական ոգնություն ցույց տալու և նրանց աշխատանքի նկատմամբ սխտեմատիկ հսկողություն ունենալու գործը:

2. Առաջարկել Կենտկոմի կադրերի բաժնին՝ ընկ. Բ. Հաբուքյունյանի և խորհրդատեսությունների քաղբաժինների հետ միասին՝ մինչև նոյեմբերի մեկը վերանայել ու ստուգել բոլոր խորհրդատեսությունների

ու խորհրդատեսային ֆիրմաների ղեկավար կազմը, անվերապահորեն ապահովելով բոլոր խորհրդատեսություններն անհրաժեշտ կադրերով և ստուգված աշխատողների կազմը ամրացնել վորոշ աշխատանքի վոչ պակաս քան 2—3 տարի ժամանակով:

Նոյեմբերի հինգին այս կետի կատարման մասին ղեկուցել Կենտկոմի քարտուղարությունն իստույ:

3. Մինչև 1934 թվականի վերջը անասունների թիվը Մասլոտրեստի խորհրդատեսություններում հասցնել խոշոր՝ յեղջուրավոր անասուններին՝ 11.400 գլխի, վորից կով՝ 6000 գլուխ և վոչխարներին՝ 20.380 գլխի, վորից մաքի՝ 14.540 գլուխ:

Առաջարկել Մասլոտրեստին՝ մեկ ամսվա ընթացքում խորհրդատեսություններին հասցնել անասունների հոտի աճման 1934 թվականի պլանները:

1934 թվականի ընթացքում խորհրդատեսություններում ձեռք բերել հետևյալ վորակական ցուցանիշները. ա) հորթերի ստուկելու ասպարեզում՝ վոչ ավելի 12 տոկոսից, 1933 թվականի 25 տոկոսի փոխարեն, և գառներին՝ նույնպես վոչ ավելի 12 տոկոսից, 1933 թվականի 40—50 տոկոսի փոխարեն. բ) ստերջ կովերի թիվը հասցնել մինիմումի (վոչ ավելի 15 տոկոսից), 1933 թվականի 30 տոկոսի գիմաց. գ) յուրաքանչյուր կովից ստացվող կաթի քանակությունը հասցնել 15 ցենտների, 1933 թվականի 12,5 ցենտների փոխարեն. դ) յուրաքանչյուր վոչխարից ստացվող բրդի քանա-

կությունը հասցնել 1,9 կիլոգրամի, 1933 թվականի 1,6 կիլոգրամի փոխարեն:

Այս ցուցանիշների կատարման համար անձնապես պատասխանատու համարել խորհանտեսությունների գիրեկտորներին ու քաղբաժնի պետերին և Մասլոտրեստի գիրեկտոր ընկ. Բ. Հաբուսյունյանին:

4. Առաջարկել Մասլոտրեստին և խորհանտեսությունների գիրեկտորներին՝ վոչ ուշ քան մինչև նոյեմբերի մեկը բոլոր խորհանտեսություններում ավարտել հաստատված պլանների համաձայն կատարվելիք շինարարությունը, բոլոր խորհանտեսություններում լիակատար նորմալ պայմաններ ստեղծելով անասունների ձմեռելու համար:

Առաջարկել համապատասխան շրջանների շրջգործկոմներին՝ ռեալ ոչնություն ցույց տալ խորհանտեսություններին շինանյութերը խորհանտեսությունները փոխադրելու գործում: Հանձնարարել ԲԳ Տեսչության ժողկոմատին՝ մինչև նոյեմբերի 10-ը զեկուցել Կենտկոմին այս կետի կատարման մասին:

5. Առաջարկել Մասլոտրեստին՝ այս աշնանից բոլոր խորհանտեսություններին կից հատուկ ոժանդակ անտեսություններ կազմակերպել՝ խորհանտեսությունների մասնագետներին ու բանվորներին անհրաժեշտ բոլոր գյուղատնտեսական մեթոդներով բավարարելու համար:

6. Հանձնարարել բոլոր խորհանտեսությունների գիրեկտորներին ու քաղբաժնի պետերին՝ ապահովել

խորհանտեսությունների կողից պետությանը հանձնվելիք արտադրանքի տարեկան պլանների կատարումը վոչ ուշ քան մինչև նոյեմբերի 15-ը, անողորք պաշքար մղելով խորհանտեսության արտադրանքը վառնելու յերևույթների դեմ:

7. խորհանտեսությունների համար հատատել մետիդացիայի 1934 թվականի հետևյալ պլանը. խոշոր յեղջուրավոր անասուններ՝ 5400 գլուխ և վոչխարներ՝ 9000 գլուխ:

8. Առաջարկել Մասլոտրեստին՝ մինչև 1934 թվականի ոգոստոսի մեկը կոտնտեսային ֆերմաների համար առանձնացնել 200 ցեղային ցուլ և 300 ցեղային դոշ:

9. Առաջարկել Կենտկոմի կադրերի բաժնին և Մասլոտրեստին՝ նոյեմբերից վոչ ուշ բոլոր խորհանտեսություններն ապահովել մշտական վերակյալ զոտտեխնիկներով ու անասնաբույժներով:

10. Հաստատել Մասլոտրեստի գծով կադրերի պատրաստման 1934 թվականի հետևյալ պլանը. ֆերմայի վարիչներ՝ 20 հոգի, բրեզավորներ՝ 84 հոգի, հովիվներ՝ 120 հոգի և կով կթողներ՝ 150 հոգի:

11. Հանձնարարել բոլոր խորհանտեսությունների գիրեկտորներին և քաղբաժնի պետերին՝ մինչև հոկտեմբերի հինգը ավարտել հնձված ամբողջ խոտը ֆերմաներն ու գոմերը փոխադրելն ու զիղելը, բոլոր խորհանտեսություններում ստեղծելով կերի հատուկ փոխանցվող ապահովության ֆոնդ՝ վոչ պակաս քան

խորհանտեսութեան համար մեկ տարվա ընթացքում անհրաժեշտ խոտի քանակութեան 15 տոկոսից:

Առաջարկել շրջործկոմիներին՝ անհրաժեշտ ոժանդակութեան ցույց տալ խորհանտեսութեաններին խոտը փոխադրելու գործում:

12. Առաջարկել Մասլոտրեստին՝ Հոդժողկոմատի հետ միասին մեկ ամսվա ընթացքում ամրացնել խորհանտեսութեաններին նրանց բոլոր հողային ֆոնդերը, չթույլատրելով, վոր խորհանտեսութեանների արոտատեղերն ու խոտհարքներն արածացվեն ու փչացվեն գյուղացիների ու քոչվորների կողմից:

13. Առաջարկել Մասլոտրեստին՝ հունվարի մեկից բոլոր ֆերմաներում ու խորհանտեսութեաններում աշխատանքի ձեռնարկելու և կազմակերպման, գործարքը կիրառելու, աշխատանքի արտադրողականութեանը բարձրացնելու և վարչատնտեսական ծախքերը կրճատելու հիման վրա արմատացնել իսկական տնտեսաշարժը, ուստի կերպով իջեցնելով անասնապահական արտադրանքի ինքնուրուշեքը:

14. Առաջարկել Մասլոտրեստին և խորհանտեսութեանների ղեկավարներին՝ 1933 թվականի ընթացքում բոլոր խորհանտեսութեաններում չիսկատար կերպով բարելավել հաշվառման ու հաշվետվութեան գործը, խիստ միջոցներ կիրառելով ֆինանսական կարգապահութեանը խախտողների նկատմամբ:

ԿՈՒՏՆՑՆՍՆԵՐՆ ԸՆԴՍՆԱԳԱՀՈՒԹՅՆ ԳԻՈՎ

1. Մինչև 1934 թվականի վերջը անասունների թիվը հասցնել — կաթնապրանքային ֆերմաներում՝ 45.000 գլխի, այդ թվում կով՝ 22.000 գլուխ, վոչխարաբուծական ապրանքային ֆերմաներում վոչխարների ու այծերի թիվը հասցնել 112.000 գլխի, այդ թվում մաքի՝ 77.000 գլուխ, խոզաբուծական ապրանքային ֆերմաներում խոզերի թիվը հասցնել 19.000-ի, այդ թվում մսյր խոզ՝ 5500 գլուխ: Առաջարկել Հոդժողկոմատին՝ մեկ ամսվա ընթացքում շրջաններին ուղարկել 1934 թվականի ընթացքում անասունների թվի աճման շրջանային պլանները:

2. 1934 թվականի ընթացքում կոտնտեսային ապրանքային ֆերմաներում ձեռք բերել հետևյալ վորահական ցուցանիշները.

ա) յուրաքանչյուր կովից ստացվող կաթի քանակութեանը 6,5 ցենտներից հասցնել 7,5 ցենտներին. բ) յուրաքանչյուր վոչխարից ստացվող բրդի քանակութեանը 1,4 կիլոգրամից հասցնել 1,6 կիլոգրամին. գ) հորթերի սատկելու տոկոսն իջեցնել, հասցնելով վոչ ալիլի քան 10 տոկոսի. դ) պտուների սատկելու տոկոսը՝ վոչ ալիլի քան 12 տոկոսի. ե) առավելագուցն չափով իջեցնել ստերջ անասունների թիվը:

3. Կոտնտեսային ապրանքային ֆերմաների համար հաստատել մետիդացայի հետևյալ պլանը. խոշոր յեղջյուրավոր անասուններ՝ 4000 գլուխ, վոչխարներ՝ 10.000 գլուխ և խոզեր՝ 2000 գլուխ:

4. Ի կատարումն «Կոմպարել կոլտնտեսականների կողմ ձեռք բերելու ասպարեզում ոգնություն ցույց տալու» վերաբերյալ ԽՍՀ Միության Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի այս տարվա ոգոստոսի 15-ի վորոշման՝ հաստատել 1933 թվականի աճից կոլտնտեսականների անձնական ոգտագործման համար հորթեր գնելու հետևյալ պլանը. բնդամենը գնել 9000 հորթ, այդ թվում կաթնապրանքային ֆերմաների ու կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի հաշվին՝ 2000 գլուխ, կոլտնտեսականներից գնելու ու անհատական տընտեսություններից և նրանց հետ կնքված կցնորակտացիոն պայմանագրեր կնքելու հաշվին՝ 7000 գլուխ:

Առաջարկել Հոգժողկոմատին տասն որվա ընթացքում իր գծով վերջնականապես լուծել հորթեր գնելու համար կոլտնտեսականներին վարկավորելու հարցը և այդ գնումների պլաններն ըստ շրջանների ներկայացնել Ժողկոմխորհի հաստատությանը, նաև կոնկրետ գործնական ձեռնարկումներ մշակել այդ պլանների կենդագործման վերաբերյալ:

5. Կոլտնտեսություններում լայն կերպով արմատացնել խողարուծությունը. այդ նպատակով առաջարկել Հոգժողկոմատին 1933 — 1934 թվականների ընթացքում հիմնական անասնապահական շրջաններում կոլտնտեսություններին կից կազմակերպել խողարուծական տնտեսություններ, վորի համար անտառային շրջանների խողարուծական ապրանքային ֆերմաները մանրացնելու հաշվին մյուս շրջանների կոլտնտեսու-

թյուններին վաճառել վոչ պակաս քան 1000 գլուխ խող:

6. Հայաստանում ցեղական անասունների աղբյուր ստեղծելու նպատակով Ստեփանավանի շրջանը հայտարարել իրեն ցեղական անասուններ աճեցնող շրջան: Առաջարկել Հոգժողկոմատին՝ հատուկ ձեռնարկումներ մշակել և կիրառել՝ այդ շրջանում ցեղական անասունների զարգացման աշխատանքները ծավալելու ուղղությամբ:

7. Կերի հաստատուն բազա ստեղծելու նպատակով հանձնարարել Հոգժողկոմատին՝ մեկ ամսվա ընթացքում մշակել և Ժողկոմխորհի հաստատությանը ներկայացնել անասնապահական շրջաններում ագրոտեխնիկական տեսակետից իրենց արդարացրած ցանքաշրջանառության այնպիսի տիպերը, վորոնք կարողանան ապահովել կերի բազայի բնդարձակումը, միաժամանակ վորոշ չափով բարձրացնելով հացահատիկային արտադրանքը:

8. Արտատեղերի ու խոտհարքների կարգավորումն ու շահագործումը ձեշտ կազմակերպելու, նաև դաշտային հողերում կերարույսեր մշակելու ձեռնարկումները գործնականորեն իրականացնելու նպատակով Հոգժողկոմատին կից կազմակերպել կերի հայթայթման հատուկ վարչություն:

9. Պարտավորեցնել Հոգժողկոմատին՝ 1934 թվականի ընթացքում մշտական ոգտագործման համար կոլտնտեսություններին ամբացնել արտատեղերի ու

խոտհարքների վերոշ շրջաններ՝ նրանց պահանջի համապատասխան, պարտավորեցնելով կոլտնտեսություններին այդ հողամասերում անպայման կիրառել արոտատեղերն ու խոտհարքները բարելավելու պարտադիր պարտինիմովը:

10. Հանրապետություն խոտհարքների ֆոնդն առավելագույն չափով ընդարձակելու նպատակով առաջարկել Հոգծողկոմատին՝ մեկ ամսվա ընթացքում մշակել արոտատեղերի մի մասը խոտհարքների վերածելու պլանը և ներկայացնել այն Ժողկոմխորհի հաստատությունը:

11. 1934 թվականի համար հաստատել կերարույսների սերմերի արտադրության հետևյալ պլանը. վիկա՝ 500 ցենտներ, առվույտ՝ 500 ցենտներ, եսպարցետ՝ 400 ցենտներ և սիլոսային բույսեր (յեգիպտացորեն, արևածաղիկ, տոպինամբուր և այլն)՝ 3000 ցենտներ:

12. 1934 թվականի համար հաստատել կերարույսների ցանքի հետևյալ պլանը. ա) խորհանտեսություններում—խոտ՝ 2760 հեկտար, սիլոսային կուլտուրաներ՝ 880 հեկտար, արմատապտուղներ՝ 160 հեկտար. բ) կոլտնտեսություններում—խոտ՝ 12.900 հեկտար, սիլոսային կուլտուրաներ՝ 2100 հեկտար, արմատապտուղներ՝ 870 հեկտար:

13. Առաջարկել Հոգծողկոմատին ու շրջկոմներին՝ մինչև 1933 թվականի նոյեմբերի մեկը լիակատար կերպով ավարտել բոլոր կիսավարտ գոմերի շինարարությունը՝ ապահովելով նրանց ներքին կահավորմամբ:

14. Առաջարկել կոլտնտեսությունների ղեկավարներին ու շրջհոգբաժիններին՝ կոլտնտեսային բոլոր ապրանքային ֆերմաներում գործարք կիրառելու, մշտական կազմով բրիգադներ կազմակերպելու, աշխատանքի ճիշտ նորմաներ մշակելու, նաև արտադրություն բոլոր պրոցեսներում արտադրական հաշվառում և սկզբնական զբաղում իրականացնելու հիման վրա արմատացնել աշխատանքի ճիշտ կազմակերպումը, կանոնավորելով շրջհոգբաժինների կողմից Հոգծողկոմատին պարբերաբար հաշվետվություններ ներկայացնելու գործը:

15. Ապրանքային ֆերմաներ ամրացնելու և նրանց աշխատանքը բարելավելու նպատակով պարտավորեցնել շրջկոմներին և ՄՏԿ-ների քաղբաժիններին՝ մինչև նոյեմբերի մեկը լսել շրջհոգբաժինների, շրջանային անասնապահական միավորումների և բոլոր անասնապահական ապրանքային ֆերմաների ղեկույցումները՝ ֆերմաների ղրություն վերաբերյալ և կոնկրետ ձեռնարկումների պլան նշել նրանց զարգացման ու կազմակերպական տնտեսական ամրացման ուղղություններ, այդ ձեռնարկումների կիրառման պատասխանատվությունը դնելով շրջհոգբաժինների ու շրջանային անասնապահական միավորների վրա, իսկ նրանց նկատմամբ հսկողություն ունենալու գործը՝ կուսակցություն՝ շրջկոմների և քաղբաժինների վրա:

16. Առաջարկել անասնապահական շրջանների շրջկոմներին և ՄՏԿ-ների քաղբաժիններին՝ մինչև հոկ-

տեմբերի 15-ն ստուգել բոլոր կաթնադրանքային ֆերմաների վարիչներին կազմը և անհատապես հաստատել նրանց:

17. 1934 թվականի համար բոլոր անասնապահական շրջանների շրջհոգրաժինների կազմում հաստատել հետևյալ մշտական հասարքները, մեկ զոտեխնիկ, մեկ մանագետ՝ կերի հայթայթման գծով և մեկ անասնաբույժ, առաջարկելով Հոգժողկոմատին՝ տասնորվա ընթացքում ժողկոմխորհի հաստատությանը ներկայացնել անասնապահության գծով շրջաններում աշխատող ինժեներատեխնիկական աշխատողների նյութական-կենցաղային պայմանները բարելավելու ուղղությամբ կիրառվելիք ձեռնարկումների նախագիծը:

18. 1933—1944 թվականի ձմռան ընթացքում Հոգժողկոմատի գծով կոլտնտեսությունների համար մասնաշաղկապ կազմեր պարտատեղում հետևյալ պլանը հաստատել. ֆերմայի վարիչներ՝ 100 հոգի, բրիգադիրներ՝ 150 հոգի, հովիվներ՝ 200 հոգի, կով կթողներ՝ 800 հոգի, անասնապահներ՝ 500 հոգի և խոզապահներ՝ 200 հոգի:

1. Կոլտնտեսականների անհատական ոգտագործման և աշխատավոր մենատնտեսների հոտերում ստերջ կովերի թիվն առավելագույն չափով պակասեցնելու նպատակով առաջարկել Հոգժողկոմատին, շրջկոմներին ու շրջգործկոմներին՝ մինչև 1934 թվականի գարունը բոլոր գյուղխորհուրդներին ու կոլտնտեսություններին

կից կազմակերպել բեղմնավորման հաստատական կայաններ, վորոնք կարողանան լիովին ապահովել ինչպես կոլտնտեսականների, այնպես էլ մենատնտեսների հոտը:

2. Զոտեխնիկական և անասնաբուժական ուղղությամբ առավելագույն չափով կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին ու մենատնտեսներին մոտեցնելու նպատակով անհրաժեշտ համարել 1933—34 թվականի ընթացքում շրջաններում կազմակերպել 20 գոտկայան և 150 անասնաբուժական կայան:

3. Առաջարկել Հոգժողկոմատին և շրջգործկոմներին՝ զոտանասնաբուժական կայաններում աշխատող բոլոր անասնաբույժներին ու զոտեխնիկներին ապահովել փոխադրական միջոցներով:

4. Առաջարկել Հոգժողկոմատին՝ 10 որվա ընթացքում ժողկոմխորհի հաստատությանը ներկայացնել անասնապահության ասպարեզում կատարվող գիտահետազոտական աշխատանքների զրկածքը բարելավելու ուղղությամբ կիրառվելիք կոնկրետ ձեռնարկումների նախագիծը:

ՀՍԽՀ Ժողկոմխորհը և ՀԿ (բ) Կ Կենտկոմը գտնում են, Վոր անասնապահության զարգացման վերաբերյալ նշված արտադրական առաջադրանքները խորհրդատեսություններում ու կոլտնտեսություններում հաջողությամբ կատարվելու կարելիքագույն գրավականը հետևյալ ձևով ձևակերպելու մասին է.

1. Խոգժողկոմը պետք է պարենպատ պայ-

մանները, խորհանդեսությունների, կոլտնտեսությունների, կոլտնտեսականների ու միասնատեսակների վողջ անասուններին լավորակ կերով ապահովելու համար, խնայողաբար ծախսելով կերը:

2. Խորհանդեսություններում, կոլտնտեսություններում ու կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում որինակելի ձևով կազմակերպել անասունների ձմեռելու գործը:

3. Վերացնել համաճարակները, անասունների ստալիկն ու նրանց պահպանման հակասանիտարական պայմանները:

4. Խորհանդեսություններում և կոլտնտեսություններում իսկական մասսայական շարժում առաջ բերել՝ անասնապահության բոլոր տեսակների և անասնապահական արտադրանքի արագ ընդարձակման ու նրա վորակի բարելավման ուղղությամբ: Վերոհիշյալ ձեռնարկումների կենսագործման համար անհրաժեշտ է յուրաքանչյուր խորհանդեսության, կոլտնտեսության մեջ սոցիալիստական անասնապահության հարվածայիններին ներգրավել բարձրորակ անասնապահության բարեկամների խմբակներում: Հոկտեմբեր ամիսը հայտարարել անասունները ձմեռելուն նախապատրաստելու աշխատանքների ստուգման միամսյակ: Իերքի տոնի որը կազմակերպել անասնապահության ասպարեզում ձեռք բերված նվաճումների ստուգատես, հատուկ ցուցահանդեսներ կազմակերպելով՝ ձմեռելուն լավագույն ձևով նախապատրաստվելու նշանաբանով:

Սոցմրցում ծավալել շրջանների, խորհանդեսությունների ու կոլտնտեսությունների միջև՝ անասունները ձմռանը նախապատրաստելու գործը լավագույն ձևով կազմակերպելու և հանուն սոցիալիստական անասնապահության բարգավաճման համար պայքարելու ուղղությամբ:

5. Ժողկոմխորհն ու Կենտկոմն առաջարկում են խորհանդեսությունների ու ՄՏԿ-ների քաղաքախններին, կուսակցական շրջկոմներին և շրջգործկոմներին՝ ամենակարճ ժամանակում վճռական շրջադարձ կատարել դեպի անասնապահության զարգացման խնդիրները և կոլտնտեսություններում ու խորհանդեսություններում կուսամասսայական աշխատանքները ծավալելու և անասնապահության սպասարկող մարմիններին, նաև առանձին խորհանդեսությունների և կոլտնտեսությունների աշխատանքի նկատմամբ սխառմատիկ հսկողություն սահմանելու միջոցով ապահովել այս վորոշման մեջ մատնանշված բոլոր ձեռնարկումների ժամանակին ու լիակատար կենսագործումը:

6. Ժողկոմխորհն ու Կենտկոմը նշում են, վոր շրջգործկոմների, շրջկոմների, խորհանդեսությունների ու ՄՏԿ-ների դիրեկտորների ու քաղաքախնի պետերի և շրջհողաքախնների ղեկավարությունը կզնահատվի նախած այն բանին, թե նրանք վորչափով կկարողանան խորհանդեսությունների ու ՄՏԿ-ների բանվորների և կոլտնտեսականների լայն մասսաներին պայքարի հանել դասակարգայնորեն թշնամի տարրերի, լողրերի, գոփողների և խորհանդեսային ու կոլտնտեսային

գույքը համարակողների դեմ՝ հանուն սոցիալիստական անասնապահության ծաղկման:

7. Գտնելով, վոր անասունների, հատկապես հորթերի, սատկելու բարձր տոկոսը և գոյություն ունեցող անտնտեսավարությունը առաջին հերթին հետեւանք և խորհրտնտեսությունների ղեկավարներին ու շրջհոգրածինների, կոլտնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմաների ղեկավարների կողմից իրենց հանձնարարված գործի նկատմամբ անպատասխանատու վերաբերմունք ունենալուն, ժողկոմխորհն ու Կենտկոմը նախազգուշացնում են բոլոր կոլտնտեսությունների ղեկավարներին, շրջհոգրածնի վարիչներին և կոլտնտեսությունների ու կոլտնտեսական ապրանքային ֆերմաների ղեկավարներին, վոր յեթե նրանք ամենակարճ ժամանակում արմատական բեկում չառաջացնեն խորհրտնտեսություններում ու կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում աշխատանքը լավագույն ձևով կազմակերպելու ուղղությամբ, նրանց նկատմամբ կուսակցական տույժի ամենախիստ միջոցներ կկիրառվեն՝ դատական պատասխանատվության յենթարկելով աշխարհներին:

8. ՀՍԽՀ Ժողկոմխորհն ու ՀԿ (բ) Կ Կենտկոմն ակաջարկում են Կենտկոմի կադրերի բաժնին, Հոլ-ժողկոմատին, Մասլոտրեստին, խորհրտնտեսություններին ու ՄՏԿ-ներին՝ քաղրածիններին և կուսակցության շրջկոմներին՝ մեկ ամսվա ընթացքում վերանայել անասնապահական ապրանքային ֆերմաներում աշխատող կոլտնտեսականների և խորհրտնտեսություն-

ների բանվորների ու ծառայողների կազմը, հաև անասնապահությանը սպասարկող տեղական մարմիններն ապահովել վստահելի ու պատրաստված աշխատողներով, այդ մարմիններում ուժեղացնելով կուսակցական կորիզը:

9. Հոկտեմբեր ամսին հրավիրել անասնապահության խնդիրներին նվիրված հանրապետական կուսխորհրդակցություն, խորհրդակցությանը քննության առնելով հետևյալ հարցերը.

ա) անասնապահության դրությունն ու նրա զարգացման խնդիրները և անասնապահական շրջանների կուսակցական կազմակերպությունների անելիքները.

բ) աշխատանքի կազմակերպումը խորհրտնտեսություններում և կաթնապրանքային ֆերմաներում.

գ) կերի հայթայթման գործի կազմակերպումը խորհրտնտեսություններում և կաթնապրանքային ֆերմաներում:

10. Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում Կենտկոմի քարտուղարության նիստերին լսել յերկու խորհրտնտեսության ղեկավարի ու քաղրածնի պետի, յերկու հոգրածնի ու շրջանային անասնապահական միավորման ղեկավարների, յերկու անասնապահական ապրանքային ֆերմայի ղեկավարների և յերեք շրջկոմի քարտուղարների զեկուցումները՝ այս վորոշման կենսագործման ընթացքի մասին:

ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ՝ Ս. ՏԵՐ-ԳԱՐԻԵԼՅԱՆ
ՀԿ (բ) Կ Կենտկոմի քարտուղար՝ Ա. ԽԱՆՋԵԱՆ

ԿՈԼՏՆՏԵՍԵԱԿԱՆ ԶԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՐ- ԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԿ(Բ)Կ ԿՆՆՏԿՈՄԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն նշում է, վոր Համ. Կ(Բ)Կ ԿԿ-ի ու ԿՎՀ-ի հունվարյան պլենումում և հարվածային կոլտնտեսականների համամիութենական համագումարում ընկ. Ստալինի տված ցուցումների հիման վրա ծավալված մասսայական-քաղաքական ու կազմակերպական աշխատանքի հետևանքով նկատելի հաջողություններ են ձեռք բերվել Հայաստանի կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ու քաղաքական ամրացման գործում: Գարնանացանի նախապատրաստման ու անցկացման և ցանքսերի մշակված ու բերքահավաքի կամպանիայի ընթացքում զգալի աշխատանք է կատարված կոլտնտեսությունները դասակարգայնորեն խորթ ու թշնամական տարրերից մաքրելու ուղղությամբ, ստուգված ու ամրացված է կոլտնտեսությունների ղեկավար կազմը, ղեկավար աշխատանքի յեն քաշված առաջավոր հարվածային կոլտնտեսականներ, բարձրացված է կոլտնտեսականների զգաստությունը, անցյալ տարվա համեմատությամբ կոլտնտեսություններում զգալիորեն բարձրացել է աշխատանքային կարգապահությունը, բարձրացված է կոլտնտեսային աշխատանքի արտադրողականությունը,

անցյալ տարվա համեմատությամբ կոլտնտեսություններում զգալիորեն ամրացել է մշտական արտադրական բրիգադը:

Այս ամենի հետևանքով կոլտնտեսությունների ղեկաչությունը մեծամասնությունն այս տարի հացահատիկային կուլտուրաների բարձր բերք է ստացել և վորոշ չափով ամրացրել է անասնապահական ֆերմաները, լիովին կատարել ու կատարում է բոլոր գյուղատնտեսական մթերոլմների պլանները և զգալի քայլ է կատարում ղեկի առաջ՝ բոլոր կոլտնտեսականներին ունեոր դարձնելու վերաբերյալ ընկ. Ստալինի պատմական լողունգի կենսագործման ուղղությամբ: Դրա ցուցանիշներից մեկն է հանդիսանում հացահատիկի այն քանակությունը, վոր հասնում է կոլտնտեսականի յուրաքանչյուր աշխուրին՝ պետական բոլոր պարտավորությունները կատարելուց և սերմացուի ու ապահովագրական ֆոնդերն առանձնացնելուց հետո: Այսպես, որինակ, Կոտայքի շրջանի Զոռ գյուղի կոլտնտեսությունում յուրաքանչյուր աշխուրին հասնում է 12 կիլոգրամ հացահատիկ՝ անցյալ տարվա 4,5 կիլոգրամի փոխարեն, Լենինականի շրջանի Բայանդուրի կոլտնտեսությունում—12 կիլոգրամ՝ անցյալ տարվա 8 կիլոգրամի փոխարեն, Վեդու շրջանի Թայթանի կոլտնտեսությունում—10 կիլոգրամ՝ անցյալ տարվա 4 կիլոգրամի փոխարեն, Շորբուլաղի կոլտնտեսությունում 12 կիլոգրամ՝ անցյալ տարվա 6,5 կիլոգրամի փոխարեն և այլն:

կենսակամի բյուրոն հասկապես նշում և այն հըս-
կայական դերի մասին, վոր ՄՏ կայաններին կից
կազմակերպված քաղաքականները խաղացին և ներկա-
յումս ել խաղում են կոլտնտեսությունների ամբաց-
ման ու բուշեիկացման գործում:

2. կոլտնտեսական շինարարության հիմնական
թերությունները Հայաստանում ներկայումս հետևյալ-
ներն են.

ա) Անբավարար և կոլեկտիվացման մակարդակը
(առ 15 սեպտեմբերի 1933 թ. 38,4 տոկոս) և համա-
բյա լիակատար կերպով բացակայում և ակտիվ աշ-
խատանքը աշխատավոր մենատնտեսներին կոլտնտե-
սությունները ներգրավելու ուղղությամբ, գոյություն
ունեն կոլտնտեսությունների աճման տեմպերն արհես-
տականորեն դանդաղեցնելու փաստեր, առանձին կոլ-
տնտեսություններում գոյություն ունեն ինքնապար-
փակման կուլակային տենդենցներ (Ղարանամազ, Գյուլ-
լիբոզազ, Ուզունլար, Բորիսովկա գյուղերի կոլտնտե-
սություններ, Յուվայի կոմունա և այլն): Դրա հե-
տևանքով վերջին տարվա ընթացքում մի շարք շրջ-
ջաններում վոչ միայն կոլտնտեսությունների նորմալ
աճում չի յեղել, այլ նույնիսկ վորոշ Հափով իջել և
կոլեկտիվացման մակարդակը (Ստեփանավան, Մար-
տունի, Շամշադին, Քեշիշքենդ, Թալին, Աշտարակ):

բ) Տեղի ունեցած ընդհանուր՝ անկասկած տեղա-
շարժերի հետ միաժամանակ գոյություն ունեն մի
շարք կոլտնտեսություններ, վորտեղ աշխատանքի կազ-
մակերպումը դեռ մինչև այժմ էլ միանգամայն ան-

բավարար վիճակում և գտնվում, հոգատար վերաբեր-
մունք չկա դեպի անասունների խնամքը, ամրացված
չեն կոլտնտեսական բրիգադները, աշխատանք չի կա-
տարվում կոլտնտեսական ակտիվ ստեղծելու ուղղու-
թյամբ, վորի հետևանքով այդ կոլտնտեսություններն
(որինակ Քյոբփալուի, Ղուլասարի, Արամուսի, Չայ-
քենդի, Այնուզուրի կոլտնտեսությունները, Բասարգե-
շարի շրջանի մի շարք կոլտնտեսություններ և այլն)
այս տարի բարձր բերք չստացան և չկարողացան ի-
րացնել սոցիալիստական խոշոր արտադրության բոլոր
առավելությունները:

3. կենսակամը Հայաստանի կոլտնտեսական շի-
նարարության առաջիկա շրջանի հիմնական խնդիրն և
համարում՝ կոլտնտեսությունների կազմակերպական-
տնտեսական ու քաղաքական ամրացման գործում ձեռք
բերված հաջողությունների ամրապնդումը և դրա հի-
ման վրա՝ լավագույն աշխատավոր մենատնտեսներին
կոլտնտեսությունների մեջ ներգրավելու ուղղությամբ
ակտիվ աշխատանք կատարելու միջոցով՝ կոլտնտեսու-
թյունների աճումն ուժեղացնելը:

կենսիվն առաջարկում և կուսակցության բոլոր
աջակցներին, աջգործիկներին, ՄՏ կայանների ֆաղթ-
միկներին յեվ աջնոյրաժիկներին.

1. Մոբիլիզացիայի յենթարկել կոլտնտեսական-
ների լայն մասսաներին՝ հացահատիկային կուլտուրա-
ների բերքահավաքը ամենաարագ կերպով ավարտելու
(վոչ ուշ քան մինչև սեպտեմբերի 25-ը), բամբակի,

ծխախոտի ու հաղորդի բերքահավաքը լավագույն ձևով անցկացնելու և սոցիալիստական անասնապահությունն ամրացնելու համար: Ամենամոտիկ որերում լիովին կատարել գյուղատնտեսական մթերումների բոլոր պլանները:

2. Բոլոր կոլտնտեսություններում ապահովել յեկամուտների ճիշտ ու ժամանակին բաշխումը: Վոչ ուշ քան մինչև հոկտեմբերի 1-ը բոլոր կոլտնտեսություններում, կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում՝ Համկ(բ)կ կենտկոմի ու ժողկոմխորհի գերեկտիվների հիման վրա, գործնական ձեռնարկումներ մշակել յեկամուտները հաջող կերպով բաշխելու վերաբերյալ և հաստատել յեկամուտների բաշխման պլանները: Տասն որվա ընթացքում ուղղել աշխատանքի հաշվառման գործում գոյություն ունեցող թերությունները և կարգի բերել կոլտնտեսությունների հաշվապահությունը՝ շրջանային կենտրոններից ու լավագույն, առաջավոր կոլտնտեսություններից հաշվետարներ ուղարկելով այն կոլտնտեսությունները, վորտեղ հաշվապահությունը վատ և կազմակերպված:

Առաջարկել Հոդժողկոմատին՝ մեկ ամիս ժամանակով շրջանները գործուղել մեկահասն ներկայացուցիչ, յեկամուտների բաշխման գործը կազմակերպելու ասպարեզում կոլտնտեսություններին ոգնություն ցույց տալու համար:

3. Վճռականորեն ջախջախել աշնանացանի ասպարեզում հանդես յեկող ինքնահոսի տրամադրու-

թյունները: Հացամթերումներին վերաբերյալ պետական բոլոր պարտավորությունները կատարելուց հետո 5—10 որվա ընթացքում բոլոր կոլտնտեսություններում առանձնացնել աշնանացանի ու գարնանացանի համար անհրաժեշտ սերմացուն, ապահովագրական սերմֆոնդերը: Ապահովել աշնանացանը սահմանված ժամկետներին ավարտելը, անպայման պահպանելով անհրաժեշտ բոլոր սպորտեխնիկական պահանջները (հողի նախապատրաստում, սերմացուի զտում, պարարտացում և այլն):

4. Յուրաքանչյուր կոլխոզում առանձին (սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 15-ը) ստուգել, թե կոլտնտեսական հոտը վճրքանով և նախապատրաստված ձևերով՝ տեղում բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնելով գոմերի շինարարությունը ժամանակին ավարտելու, անձնական ոգտագործման համար կով չունեցող կոլտնտեսականներին ոգնություն ցույց տալու նպատակով մատուց աշնանացաններ ձեռք բերելու ու աճեցնելու, կոլտնտեսական ամբողջ հոտը կերի ռեսուրսներով ապահովելու և կերի ապահովագրական ֆոնդեր ստեղծելու համար:

5. Յուրաքանչյուր կոլտնտեսությունում և գյուղում քաղաքական ու կազմակերպական լայն աշխատանք ծավալել կոլտնտեսությունների աճում ստեղծելու ուղղությամբ: Հատկապես ստուգել այն կոլտնտեսությունների վիճակն ու ղեկավարությունը, վորտեղ նոր անդամների հոսանք չկա դեպի կոլտնտեսությունները: Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ըն-

Թացքում բոլոր գյուղերում կոլտնտեսականների ու մեծատնտեսների խառը ժողովներ անցկացնել, այդ ժողովներում լսելով կոլեկտիվ տնտեսությունների վարչությունների ու լավագույն հարվածայինների գեկուցումները տնտեսական տարվա արդյունքների մասին և քննության առնել կոլտնտեսությունների աճման հարցը: Սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 5-ը բոլոր շրջաններում անցկացնել լավագույն մեծատնտեսների մեկորյա կոնֆերանսներ՝ նվիրված կոլեկտիվացման աճման հարցերին: Լավագույն մեծատնտեսներին ներգրավել կոլտնտեսությունների արտադրական խորհրդակցություններում և մասնակից դարձնել արտադրական բրիգադների աշխատանքն ընդունող ու գնահատող հանձնաժողովների գործունեությունը: Կոլտնտեսություն մտնել ցանկացող մեծատնտեսներին բացատրել, վոր նրանց 1933 թվականի ցանքից ստացված բերքը չի հանրայնացվում, հանրայնացման յենթակա յեն գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ նախատեսված արտադրության միջոցներն ու նյութերը (սերմացու, ֆուրաժ): Կոլտնտեսություն մտնող գյուղացիներն իրենց 1933 թվականի բերքը հավաքելու համար ոգավում են կոլտնտեսությունների բանող անասուններից ու գյուղատնտեսական մեքենաներից:

6. Պարտավորեցնել կոլտնտեսությունների վարչություններին՝ կոլտնտեսություն մտնելու վերաբերյալ մեծատնտեսներից ստացվող վիժմուքները քննության առնել և ձևակերպել վրչ ուշ քան յիմուքն ստանալուց յերեք օրվա ընթացքում:

7. Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում վերանայել բոլոր բրիգադիւնների ու անասնապահական ֆերմաների վարիչների կազմը՝ կուրս վերցնելով՝ այդ աշխատանքներում առաջ քաշել լավագույն, ստուգված հարվածային կոլտնտեսականներին՝ նրանց միքանի տարվա ընթացքում ամրացնելով վորոշ աշխատանքի: Ձթույրատրել, վոր կոլտնտեսության գեկավար աշխատողների (կոլտնտեսության նախագահ, ֆերմայի վարիչ, բրիգադիւններ և այլն) հոսունություն տեղի ունենա. այնպիսի դրություն ստեղծել, վոր կոլտնտեսության բոլոր գեկավար աշխատողները՝ իրրե կանոն՝ առաջ քաշվեն տվյալ կոլտնտեսության միջից և վոչ թե դրսից նշանակվեն: Հատուկ ուշադրություն նվիրել կոլտնտեսությունների գեկավար աշխատանքներում կոմունիստների հետ միասին առաջ քաշելու նաև լավագույն անկուսակցական հարվածային կոլտնտեսականներին:

Հանձնարարել Հովտոկոմսիին, Տրակտորկեմսոնին, կուսակցություն բոլոր քոլկոմներին, քոզգործկոմներին, ՄՏ կոյալներին փաղբաժիններին յեվ Կենսկոմի կազմ-նախանգչական ու ագիտ-մասսալական կոմպանիաների բաժիններին՝

8. Աշխտացանի ընթացքում վերջնականապես ուղղել արտադրական բրիգադներ կազմակերպելու գործում գոյություն ունեցող սխալներն այնպես, վոր ցանքաշրջանառության յուրաքանչյուր գաշտում վորոշ հողամաս հատկացվի բրիգադին և այդ հողամասը տվյալ բրիգադին ամրացվի ցանքաշրջանառության

ամբողջ ժամանակամիջոցում: Այն կոլտնտեսություններում, վորտեղ ցանքաշրջանառություն կիրառվում է, բրիգադներն այնպես կազմել, վորպեսզի նրանցից յուրաքանչյուրին հիմնական, առաջատար կուլտուրայի հողամասի հետ միասին ամրացվի նաև ուժանդակ կուլտուրաների վորոշ հողամաս, այնքան, վոր գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ շրջանում ապահովված լինի բրիգադի լիովին ու հավասարաչափ բեռնավորումը:

9. Աշխատանք ծավալել ցանքաշրջանառությունն արմատացնելու ուղղությամբ, ուղղելով ցանքաշրջանառության ասպարեզում առանձին կոլտնտեսություններում թույլ տրված սխալները և կոլտնտեսական լայն հասարակայնությունը գործնականորեն մոբիլիզացիայի յենթարկելով բերքատվության բարձրացման այդ կարևորագույն ձեռնարկման շուրջը (ցանքաշրջանառության տիպերն արտադրական խորհրդակցություններում քննելը, չափերարների կադրեր առանձնացնելը, կուլտուրաների հերթականության անցնելու կարգ սահմանելը և այլն), աշնան և ձմռան ընթացքում ուժեղացնել նախապատրաստական աշխատանքները՝ 1934 թվականի գարնանից բոլոր կոլտնտեսություններում ցանքաշրջանառության կիրառումն արագացնելու համար:

10. Բոլոր կոլտնտեսություններում ստուգել կոլտնտեսության հողերի քանակն ու կերպարանավորումը և գոյություն ունեցող որենքների հիման վրա հողերի քանակությունը լիակատար կերպով համապա-

տասխանեցնել կոլտնտեսություն անդամների թվի հետ: Ձթուլատրել կոլտնտեսությունների համայնացված հողերից կտրելն ու այլ նպատակի հակառակելը:

11. Ստորեն հետևել, վոր գործնականում իրականացվին կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների համար՝ մենատնտեսների համեմատությամբ՝ խորհրդային որենքներով նախատեսված բոլոր արտոնությունները (հարկադրում, պարտադիր մթերոմսների կարգով կատարվող գանձումների նորմաներ և այլն):

12. Լենինականի կոլտնտեսային դպրոցը վերականգնել և 1934 թվականի հունվարի 1-ից վերածել կոլտնտեսային հաշվետարների 6-ամսյա դասընթացների:

13. Կորկրեստ ղեկավարություն ուժեղացնելու և կոլտնտեսությունների աշխատանքի դրական փորձը տարածելու նպատակով առանձնացնել 50 խոշոր կոլտնտեսություններ, 50 կոլտնտեսային բջիջներ ու 50 գյուղխորհուրդներ և առաջարկել Հոգժողկոմատին, Կենտկոմի բաժիններին ու «Սորհրդային Հայաստանի» խմբագրությունը կանոնավոր կապ հաստատել նրանց հետ:

Սահմանել, վոր Հոգժողկոմատը և Կենտկոմի բաժիններն առանձնացված կոլտնտեսություններում, կոլտնտեսային բջիջներում ու գյուղխորհուրդներում՝ աշխատանք պետք է կատարեն կոլտնտեսային շինարարության վերաբերյալ կուսակցության ու կառավարության կարևորագույն ղեկավարների կենսագործման ուղղությամբ և համապատասխան ՄՏ կայանների քաղ-

բաժինների հետ միասին պատասխանատու չեն այդ
կողմնատեսությունների ընդհանուր վիճակի համար:

Կենտկոմի քարտուղարության նիստերում պար-
բերաբար լսել առանձնացված կողմնատեսությունների,
կողմնատեսային բջիջների ու գյուղխորհուրդների և
Կենտկոմի բաժինների զեկուցումները:

14. Հանձնարարել Հոգծովկոմատին և Կենտկոմի
կազմերի բաժինն՝ տաան որվա ընթացքում Հոգծովկո-
մատի Աշխատանքի կազմակերպման սեկտորն ուժե-
ղացնել պատրաստված ու փորձված աշխատողներով:

15. Հոկտեմբեր ու նոյեմբեր ամիսների ընթաց-
քում Կենտկոմի բյուրոյի նիստերում լսել հինգ շրջ-
կոմիտեի քարտուղարների ու յերեք քաղբաժինների
պետերի զեկուցումներն այս վորոշման կենսագործման
մասին:

ՀԿ (բ) Կ Կենտկոմը հանձնարարում և բոլոր կու-
սակցական կազմակերպություններին՝ լիովին կենսա-
գործել վերոհիշյալ ձեռնարկումները, ուժեղացնել ոպե-
րատիվ ղեկավարությունը կողմնատեսությունների
նկատմամբ, անողոր պայքար ծավալել կուլակության
ու դաշնակների ֆնացորդների դեմ, մերկացնել ու ջախ-
ջախել աջ ոպորտունիստական ու «ձախ» պրակտիկան
կոլանտիխարարության գործում, ուժեղացնել պայքա-
րը կողմնատեսություններում հանրային սեփականու-
թյան պաշտպանությունն ամրացնելու համար, և կոլ-
տնատեսությունների հետագա կազմակերպական-տրն-
տեսական ու քաղաքական ամրացման հիման վրա,
այս աշնանն իսկ կողմնատեսությունների նոր հուժկու
աճում առաջ բերել:



ՀՀ Ազգային գրադարան



ML0301115

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

21-311



О мероприятиях развития
животноводства в Армении

Постановление
СНК ССРА и ЦК КП(б)А

Очередные задачи
колхозного строительства в Армении

Постановление
ЦК КП(б)А от II сентября

Партиздат. 1933. Эривань